ՀՀ ՏԿՆ ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ

Ներդրումային ծրագրերի համակարգման տնօրինություն

Խորհրդատվական ծառայություններ — Վերջնաժամկետ՝ 17 Նոյեմբերի 2014թ
Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր (CIP)
II, փուլ 3-ՀՀ, Ջրամատակարարում և Ջրահեռացում

Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Ref.-No.: BMZ 2013 66 343

Նախաորակավորում

Խորհրդատվական ծառայություններ
Միջազգային Բաց Մրցույթ

Շիրակ Ջրմուղկոյուղի ՓԲԸ, Լոռի Ջրմուղկոյուղի ՓԲԸ, Նոր Ակունք ՓԲԸ, Հայջրմուղկոյուղի ՓԲԸ և 560 գյուղերի սպասարկման տարածքներում գտնվող ջրամատակարարման ցանցերի և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և հեղինակային հսկողություն՝ բաղկացած չորս լոտից, CIP II-P3

Լոտ-1: Շիրակ Ջրմուղկոյուղի ՓԲԸ սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման ցանցերի և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և հեղինակային հսկողություն, *CIP II-P3-SH*

Լոտ-2: Լոռի Ջրմուղկոյուղի ՓԲԸ և Նոր Ակունք ՓԲԸ սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման ցանցերի և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և հեղինակային հսկողություն, *CIP II-P3-L-NA*

Լոտ-3: Հայջրմուղկոյուղի ՓԲԸ սպասարկման տարածքում գտնվող ջրամատակարարման ցանցերի և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և հեղինակային հսկողություն, *CIP II-P3-AWSC*

Լոտ-4: 560 գյուղերի սպասարկման տարածքներում գտնվող ջրամատակարարման ցանցերի և ջրահեռացման համակարգերի նախագծում, տեխնիկական և հեղինակային հսկողություն, *CIP II-P3-VILL*

Մրցույթն իրականացնող՝

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ (ՀՋԿ ՓԲԸ),
Պրն Նորիկ Գևորգյան, ՀՋԿ ՓԲԸ ՆԾՀՏ-ի տնօրեն,
Հասցեն՝ Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ, ք.Երևան, 0010, ՀՀ
Հեռ./ ֆաքս՝ (374 10) 54 28 77
էլ. փոստ՝ ngevorgyan@armwater.am,
kghambaryan@armwater.am

Ֆինանսավորում՝ Գերմանիայի Զարգացման Բանկ (KfW), Եվրոպական Ներդրումային Բանկ (EIB), Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային Գործիք (NIF) և Հայաստանի Հանրապետություն:

Պայմանագիրը շնորհվում է համաձայն «KfW» բանկի գործող ուղեցույցների (տես՝ www.kfw.de)

1. Ծրագրի չափանիշներ

Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության Ջրային տնտեսության պետական կոմիտեն («Պետական կոմիտե») համագործակցում են Գերմանիայի Զարգացման Բանկի (KfW), Եվրոպական Ներդրումային Բանկի (EIB) և Եվրոպական Միության Հարևանության Ներդրումային Գործիքի (NIF) հետ՝ Համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրի (CIP) II, փուլ 3 իրականացնելու համար:
Ծրագիրն ուղղված է ջրամատակարարման ցանցերի վերականգնմանը, վերանորոգմանը ու ընդլայնմանը, ինչպես նաև մի շարք հրատապ աշխատանքների իրականացմանը ջրահեռացման համակարգերում ՝ Շիրակ Ջրմուղկոյուղի ՓԲԸ, Լոռի Ջրմուղկոյուղի ՓԲԸ, Նոր Ակունք ՓԲԸ և Հայջրմուղկոյուղի ՓԲԸ և 560 գյուղերի սպասարկման տարածքներում, որոնք սփռված են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքով:
Ծրագիրը ներառում է նաև Արմավիր-Մեծամոր (Նոր Ակունք ՓԲԸ սպասարկման տարածք) կեղտաջրերի մաքրման կայանի աշխատանքները:
Ծրագիրն ընդգրկելու է երրորդ փուլը, որի նպատակն է շարունակական 24/7 և պահանջարկի վրա հիմնված խմելու ջրի մատակարարման ապահովումը՝ բարձրացնելով մարդկանց կենսապահովման մակարդակն ու սանիտարահիգիենիկ պայմանները:

2. Յուրաքանչյուր լոտի համար պահանջվող խորհրդատվական ծառայություններ

1. Նախագծային աշխատանքները պետք է իրականացվեն երկու փուլով .

Փուլ 1. Նախնական նախագծի (ՆՆ) պատրաստում

ՆՆ-ի պատրաստման փուլում պետք է կատարվեն ներքոնշյալ հիմնական աշխատանքները.

- Բնակչության և ջրապահանջի կանխատեսումներ մինչև 2040թ.,
- Բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի ներկա իրավիճակի ուսումնասիրություն,
- Առկա խնդիրների և թերությունների վերլուծություն,
- Մինչև 2040 թ. ջրամատակարարման համակարգերի ընդհանուր պահանջների վերլուծություն,
- Շրջակա Միջավայրի Նախնական Ձննման մշակում (ՇՄՆՁ)՝ ՆՆ-ի փուլում Շրջակա Միջավայրի Սոցիալական Կառավարման և Մոնիտորինգի Պլանի (ՇՄՍԿՄՊ)՝ պատրաստման համար,
- Հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ և ջրի որակի սահմանման նպատակով նմուշառումների իրականացում՝ ջրային ռեսուրսների առկայությունը սահմանելու և հաստատելու համար (անհրաժեշտության դեպքում նոր ռեսուրսների անվտանգությունն ապահովելու համար),
- Դաշտային գործիքային ուսումնասիրությունների իրականացում՝ մետաղ որոնող սարքերի, հոսակորուստների սարքավորումների, ուլտրաձայնային հոսքաչափերի, GPS սարքերի միջոցով և այլն,
- Վերակառուցման նպատակով ընտրված միջոցների հիմնավորում,
- Հիդրավլիկական մոդելավորում,
- Զարգացման սխեմայի մշակում,
- Ներդրումային ծրագրի մշակում՝ առաջնահերթության սկզբունքով:

Փուլ 2. Աշխատանքային նախագծի (ԱՆ) պատրաստում

ԱՆ-ի պատրաստման փուլում պետք է կատարվեն ներքոնշյալ հիմնական աշխատանքները.

- Անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ դաշտային, գործիքային և ջրաղբյուրների հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ,
- Բաշխիչ ցանցի և այլ կառույցների կառուցման ու վերակառուցման նախագծերի համար անհրաժեշտ գեոդեզիական հանույթներ,
- Գրավոր համաձայնեցումների ձեռքբերում տարբեր գերատեսչություններից՝ ենթակառուցվածքների/կոմունիկացիաների (գազատար խողովակներ, էլեկտրական և հեռահաղորդակցման մալուխներ) և նախագծվող ջրագծերի հատումների համար, գրավոր համաձայնեցումներ վարչական մարմինների հետ՝ շինարարական աղբի տեղադրման նպատակով թափոնային հրապարակների կառուցման համար, հողի ձեռքբերման համաձայնեցումներ համապատասխան փաստաթղթերով և այլն,
- Նախագծվող բոլոր ջրագծերի հատվածներում խրամուղիների և կառույցների հիմնատակերի ինժեներաերկրաբանական հետազոտությունների իրականացում,
- ԱՆ-ի պատրաստում համաձայն ՀՀ գործող շինարարական նորմերի, կանոնների և պետական ստանդարտների,
- ԱՆ-ի աշխատանքային ծավալների, տեխնիկական մասնագրերի և նախահաշիվների մշակում՝ համաձայն ՀՀ Քաղաքաշինության նախարարության նորմերի,
- ԱՆ-ի տեխնիկական փորձաքննության, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված դեպքերում բնապահպանական փորձաքննության եզրակացությունների ձեռք բերում,
- ՇՄՍԿՄՊ-ի մշակում,
- ՇՄՍԿՄՊ-ի ներկայացում Ծրագրի իրականացման յուրաքանչյուր համայնքում՝ հանրային լսումների միջոցով:

2. Շինարարական աշխատանքների (ներառյալ բնապահպանական և անվտանգության աշխատանքները) տեխնիկական և հեղինակային հսկողություն

Շինարարական աշխատանքների իրականացման պայմանագիրը ստորագրելուց հետո, Խորհրդատուն պետք է սկսի շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողությունը՝ համաձայն ՀՀ օրենսդրության և գործող կանոնակարգերի: Վերջինս պետք է ստանձնի FIDIC-ի ինժեների դերը:

3. Աջակցություն ծրագրի իրականացման գործընթացին

Խորհրդատուն պետք է աջակցի ծրագրի իրականացման աշխատանքներին՝ ներառյալ պայմանագրի իրականացման վերահսկողությունը, գնումների գործընթացը, վճարումները և կապալառուների, ինչպես նաև դոնորների հետ փոխհարաբերությունները:

3. Ծառայությունների իրականացման նախատեսված ժամկետն է հինգ տարի՝ պայմանագրի ստորագրման ամսաթվից:

4. Իրավասու և որակավորված խորհրդատվական կազմակերպությունները (Խորհրդատուներ) հրավիրվում են ներկայացնելու խորհրդատվական ծառայությունների մատուցման իրենց հետաքրքրության հայտը: Կարճ ցուցակի ընտրության չափանիշներն են՝
(i) հիմնական գործունեություն և ընդհանուր փորձ (կազմակերպությունը պետք է ունենա ոլորտում աշխատանքի նվազագույնը 7 տարվա փորձ) (ii) առնվազն 5 տարվա նմանատիպ փորձ նմանատիպ ծրագրերի իրականացման համար (iii) նմանատիպ պայմաններում աշխատանքի փորձ զարգացող և անցումային երկրներում (iv) նմանատիպ պայմաններում աշխատանքի փորձ տարածաշրջանում կամ երկրում (v) առկա մասնագետի փորձ (vi) նվազագույն տարեկան շրջանառությունը վերջին 3

տարիների ընթացում Լոտ-1-ի համար պետք է կազմի 3 մլն Եվրո, Լոտ-2-ի համար՝ 2.5 մլն Եվրո, Լոտ 3-ի համար՝ 3 մլն Եվրո և Լոտ-4-ի՝ 1.4 մլն Եվրո (vii) կազմակերպության կազմակերպչական և տեխնիկական հզորություններ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ բազմակի պայմանագրերը չեն թույլատրվում, այսինքն՝ մեկ Խորհրդատուն պետք է դիմի միայն մեկ լոտի համար, բացառությամբ Լոտ-4-ի: Սա նշանակում է, որ Խորհրդատուն կարող է դիմել Լոտ-4-ին երեք այլ լոտերի հետ զուգահեռ:

5. Լրացուցիչ տեղեկություններ (Հետաքրքրության Հայտի ամբողջական տարբերակը) կարող են ձեռք բերել Մրցույթի Իրականացնողի գրասենյակից, աշխատանքային օրերին, ժամը 10:00-ից մինչև 17:00 (տեղական ժամանակով):

Նախաորակավորման փաստաթղթերի ներկայացում. Նախաորակավորման առաջարկը պետք է ներկայացվի մեկ բնագիր օրինակով և մեկ պատճենով, փակ ծրարում՝ Ծրագրի Իրականացման Գրասենյակ (տես ստորև նշված հասցեն Լոտ-1, Լոտ-2, Լոտ-3 և Լոտ 4-ի համար) ոչ ուշ քան ***2014թ-ի Նոյեմբերի 17-ը***: Փաստաթղթերը պետք է ներկայացվեն գրավոր, անգլերեն լեզվով (լրացուցիչ ռուսերեն կամ հայերեն թարգմանության ապահովումը նախընտրելի է, բայց ոչ պարտադիր): Պետք է ներկայացվի նաև փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակը՝ սկավառակի վրա (Adobe PDF կամ Word ձևաչափով):
Նույն օրը նախարոակավորման առաջարկի մեկ պատճենն անգլերեն լեզվով պետք է ներկայացվի KfW բանկին:
Մրցույթի Իրականացնողը պատասխանատվություն չի կրում փաստաթղթերի կորստի կամ սահմանված ժամկետից ուշ հանձնելու դեպքում:
Փաստաթղթերն անվճար են:

«Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ
Ներդրումային Ծրագրերի Համակարգման Տնօրինություն
Պրն Ն. Գևորգյան, ՀՋԿ ՓԲԸ-ի ՆԾՀՏ տնօրեն
Վարդանանց փակուղի 8ա, 3-րդ հարկ
0010, Երևան, ՀՀ
Հեռ./ Ֆաքս (+374 10) 54 28 77
էլ-փոստ՝ ngevorgyan@armwater.am,
kghambaryan@armwater.am

Պատճենը KfW Զարգացման Բանկ
LEd4 վարչություն
Պրն՝ Թոմաս Վուլֆ
Պալմենգարթեն փ. 5-9
60325 Ֆրանկֆուրտ
Գերմանիա
էլ-փոստ՝ thomas.wolf@kfw.de